# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

## ՅԱՌԱՋԱԲԱՆԱԿԱՆ

Չկայ բան մը՝ որ նպատակ մը կամ վախճան յոյս մը չունենայ. ամեն ինչ որ կ'ըլլայ և կ'ըլլալի եղբէն անկից յուսացուած բարիքի մը համար ըլլալը ամեն ողջամիտ կը վկայէ. յայտ է ուշխորհքս բանող առաջին կառավարը և ուշխոր-հակումը, ամենքս յուսոյ ձեռքն ենք՝ իշխանք և իշխեցեալք, անիկայ է բոլոր մեր գործքերուն սկզբնն ու շարժիչը, մանաւանդ որ մեր հոգեւոր պարտաւո-րութեանց մէկն ալ յոյսը ըլլալը գիտենք մեր հոգւոյն վարդապետէն։

Յուսոյն անհրաժեշտութեամբն է որ մարդ առաջին անհամար դժուարութիւն-ներ և անտանելի աշխատութիւններ յանձն առած՝ ծանր քրտինքով համ-բայ կ'ելլէ բանի մը ձեռնամուխ ըլլալու կամ բան մը հաստատելու, և ա-նոր երեսէն տեսանելիք ապագայ բարեացը համար զարմանալի երկայնմտու-թեամբ մը աշխուշ եղած փշոտներուն և ցաւերուն կը տանի և կ'ըսպասէ իր կէտողիր ժամանակին ամենեւին չի յուսահատելով և արիութեամբ։ Երկրա-գործի մը կամ պարտիզպանի մը օրինակը բաւական է մեզի խօսքերնիս հաստա-տելու. արդեօք ի՞նչ նորանոր յոյսերով և գովելի ժրութեամբ՝ տարիներով յառաջ բոլոր իր ուժը և հարստութիւնը կը վատնէ և հազիւ տակը կը ծածկէ մշակ մը տանի մեկ ծանր հոգերովը, հետեւեալ տարւոյն կամ ալ եւս քը քաղելիք բարեացը համար, և մինչեւ նոյն օրն ալ գիտէ թէ չարունակ կ'ու-խատի ու խնամք կը տանի դաւն ճգնութեամբ։

Ասանկ են ծնողաց կամ հօր մը գութն և ճիգերն ալ իրենց զաւակացը վրայ. ծննդեան կէտէն հետը կը ծնանին անհամար հոգեր և ծանր քրտինքներ, բայց առողջին ծնողքը տանց ամենուն ալ կը ներքեւին և արիաբար կը տանին՝ զա-ւակաց երեք հասակներուն մէջ ալ, մինչեւ որ նոքա հասակը հասցինեն,

այս հաստկիս մէջ անոնց երեւէն անմնայլ բարիքներուն համար։ Բացած անհնարին վիշտերին և գաւն տառապանքին, թէ և Ամերիկայ մը ընդունելութեանփն ըլլան, աշխարհուն բան մը չէին ըներ, միայն թէ զաւակին բարի կրթութեամբ և կանոնաւոր դաստիարակութեամբ զօրանան և տոհմերնուն ու ազգին փառք ու պարծանք ըլլալու յոյսերը իրենց վրայ ցցուցնեն։ Ըսենք ոգեւէր հօր մը արդեօք որչափ հաճելի է որ իր զաւկին փորձ 'ի չատ երախայրի պտուղները վայելել և իր այնչափ տանն անոնց բարութեանը համար թափած ծանր աշխատութիւններուն բարի արդասիքները անոնց վրայ տեսնալ և անոնց բարի զարգացումներովը հրճուենալ։ Արդեօք մեկը այսպիսի հայր մը իր նորանոր հայրական խնամքները իր աչքին չի խնայէին արդելէլ, քան, առանց են Զվարդեա առաքինի հօր մը պարտքերը։ Ընդհակառակը հօրը այսչափ սէրս խնամքներուն փոխարէն երբոր և ոչ բարութեան և զարգացման նշան մը տեսնալի զաւկին վրայ, հօրը յոյսերը 'ի դերեւ ելած չե՞ն մի ըլլար, այլ այնուհետեւ հօրը վրայ նոր ձիգեր թափելու սերս կը մնայ մի. ուրեմն որդւոյն ալ պարտքն է նորանոր միջոցներով հօրը սրտին բերկրութիւն տալ և անոնց 'ի գլուխ թափուած չքնաղը զանազան պտուղներով յայտնել և յուսադրել զանի այլ ուրիշ ապագային։

Ահա այս կերպով Սամաթիոյ Ս. Սահակեան վարժարանի աշակերտութիւնն ալ որ դրեթէ եօթը տարիէ 'ի վեր ազգին հայրական գութն և առատ խնամքները կը վայելէն աննախանձաբար, և ազգը միշտ պատրաստ է անոնց ամէն պէտքերը հոգալու, անշուշտ ժամանակին անոնց բարութիւնները տեսնելու յուսով և ակնկալութեամբ, ուրեմն անոնց ալ երախտագիտութեան պարտքը չէ՞ մի իրենց խնամակալները յուսադրել և հետզհետէ անոնց սրտերուն արդասիքները զանազան միջոցաւ անոնց ներկայացնելու ջանալ։

Այս խորհրդով ահա այսօր վարժարանս իր վրայ եղած անհամար խնամքներուն և հոգերուն դէմ առաջ թափուած չքնաղին իբր ձօնակ մը կ'ուզէ իւր երախտալիքը ազգին ընդհանրութեանը ներկայացնել. ազգը իր Բուրսասանը կը հրաւիրէ աճեցուցած ու բեղմնաւորած ծաղիկները ու պտուղները վայելելու և անոնց բուրած և արտադրած հոտովն ու ճաշակովը զուարճանալու։

Ցուցնել բաներ Սուրբ Սահակեան ընկերութիւնն այսօր որդւոյ ազգասէրաց հաճութեամբը և ազգային մեծարոյ ժողովոյ հաւանութեամբը կը տնօրինէ ամսական տեսութիւն հրատարակել, վարժարանին զարգացած աշակերտներուն աշխատասիրութեամբը իբր ցոյց մը իրենց ամենօր աշխատութեանցը, ԲՈՒՐԼԱՍԵԱՆ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿԵԱՆ անունով, առիթը անգամ մը ութթամսայ թերթով չորս գլխաւոր մասերու մէջ ամփոփուած. Նորայեան, Խանձեան, Տիգրանեան, և Արամեան, որոնք պիտի ըլլան զանազան ուսմանց և գիտութեանց մեկնաբերութեան և տեղեկութեան արժանի յօդուածներ, և զանազան լեզուներէ թարգմանութիւններ, գրաբար և աշխարհաբար ճառեր և ատենաբանութիւններ, հետաքրքրական նիւթեր, բարոյական խորհրդածութիւններ և առակներ, զուարճալի հանելուկներ և պատմութիւններ, և բնութեան պատկերացը մեկնաբերութեան դրութիւններ, արհեստական գիւտեր և կերպեր, զանազան խրա-

գիրքեր և առաջարկութիւններ և անոնց լուծումները և դպրոցիս ու ընկերութեանս վերաբերեալ լուրեր և տեղեկութիւններ և այլ ասոնց նման զանազան գրուածներ որ կարդացուելու և լոյս արժանի կը դատուին ։ Այսպէս նաև հաստատուն է որ յարգի ընթերցողներն ալ մասնակից ներգործութեամբ պատիւ պիտի ընծայեն դպրոցիս և ընկերութեանս քաջալերութեանը համար իրենց ընթերցասիրութեանց ախորժակութենէն չի զրկել ։

Մեր այս ամէն խորհուրդներէս և ձեռնարկութիւններէս շարժառիթ և յուսադիր գտնուեցան, աս հետեւեալ չորս գլխաւոր նպատակներնիս ո-րոնք անշուշտ և յարգի ընթերցողաց իրաւացի թուելէն կասկած չունինք ։

Նախ՝ որովհետեւ ազգը Մուրբ Սահակեան ընկերութեանս և վարժարանիս հիմնարկութենէն ՚ի վեր իւր առաջին խնամքները և արդիւնքները ասոր վրայ դրած է թափել և կը խնամէ միշտ, ուստի անշուշտ կ՚ուզէ ալ անոր արգասիքները վայելել և անոր արդիւնքները տեսնել, ինչպէս ամէն տեղ այս նպատակիս համար սահմանուած են ժամանակաւոր քննութիւններ ։ Բայց որովհետեւ շատ հեռաւոր ազգականներ ալ ունինք և մերձաւորներէն շատերն ալ աշխարհային զբաղմունքներնէն գալու չեն առնուր իրենց անձնական այցելութիւններովն ու ներկայութեամբը պատուել և ականատես լինել, որով և դպրոցս ալ այսպիսի շատերուն տեսութենէն զուրկ կը մնայ ․ բայց այս Բուրաստանիս միջոցաւ՝ թէ վարժարանիս աշակերտաները մշտնջենաւոր քննութեան մը շարունակութեան ընթացքին մէջ եղած կ՚ըլլան և թէ բոլոր համազգիք՝ հեռաւորք և մերձաւորք, ամէն մարդ իւր տեղը ասանց արգելքի ամէն ժամանակ կրնան իրենց աչքին առջին նկատել անոր միտումը և ընթացքը որն որ անհրաժեշտ պարտք մը պէտք է համարուի ։

Երկրորդ՝ աշակերտներց յորդոր մը և խրախոյս մը եղած կ՚ըլլայ, զարգացելոց՝ որ իրենց աշխատութիւններովը կը ջանան ինքզինքնին ազգին ճանչցնել թէ իրենց համար եղած խնամքները ու ծախքը փուճ տեղը չեն, և աւելի կը խրախուսին, այլոց՝ որ ջանք կ՚ընեն իրենք ալ զարգացելոց կարգը անցնելով երախտագիտութիւնուն պարտքը կատարած ըլլան և անոնց ընդունած ազնիւ-ներուն արժանանան, գուցէ ուրիշներուն ալ որ բան սորվելու ճամբուն չեն հետեւիր իրենց համակիցներուն և ժամանակակիցներուն բարի ընթացքը և փառքը և աշխատութիւնները տեսնելով՝ թէ ինչպէս ազգը անոնց զանազան գործերը տարբերութեամբ կը պատուէ ու կը սիրէ, իրենք ալ կ՚ա-րելի եղածին չափ անոնց մտաւորութեան ընթացքը բռնելու խրախուսին որն որ է ինչպէս ընկերութեանս նմանապէս և բոլոր ազգին մի միայն նպատակը և գիտասիրութիւնը ․ ուսումնասիրութիւնը տարածուելը ։

Երրորդ, թէ ներկայ աշակերտաց աշխատասիրութիւնները՝ որ իրենց աշխատութեամբը յառաջ կը բերեն՝ անկորուստ մնալով տարեկանի գրքոյկի մը մէջ ամփոփուած ըլլան, եթէ արժանի՝ յընթերցումն համբաւոց ․ և թէ սահմանեալ ընթացքնին կատարելով վարժարանէն հրաժարող աշակերտացն ալ՝ Բուրաստանին նիւթ պատրաստելու հարկ մը եղած ըլլալով, իրենց աւելորդ ժամանակներնին ասանկ բարի բաներու գործածելը իրենց սովորութիւն մը

եղած ըլլայ ։

Զորօրինակ՝ այս կերպով կարելի է ազգին ուսումնասիրութեանն ալ քիչ շատ նպաստաւորութիւն մը և օգուտ մը մատակարարած ըլլանք, որն որ պէտք է ըլլայ ազդաթերթի մը միմիայն մասնաւորութիւնը, և ընթերցողաց մէկու՛ն կամ միւսոյն երբեմն հաճելի կտոր մը գտնելն ալ մեր աշխատութեանը մեծ մխիթարութիւն և փոխարինութիւն սեպելով՝ օրագրիս հրատարակմանը ձեռնարկելնուս վարձքը ընդունած կը սեպենք ինքզինքնիս ։

Այս կերպ խորհրդածութիւնները եղան մեզ ձեռնտու և առաջնորդ, և յուսամք թէ չէ վրիպաւոր, վասն զի թէ որ ընթերցողք ալ իրենց յորդահոս առատաձեռնութեամբը պատիւ ընելու ըլլան մեկենասութեանս՝ տակաւին շատ առաւել աշխուժով բաներու ալ ձեռնամուխ ըլլալուն ձեռնտու և յորդոր գտնուած ըլլալնին իրենց արդարասիրաց պտղաւորութեամբ կը թուիմք խնամատարել ։

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

1. Բուրաստանը հիմակու հիմա ամսը անգամ մը կը հրատարակուի ամէն ամսուն մէկին ութածալ թերթով 16 երես ։

2. Տարեկան բաժանորդութեան գինը կանխիկ 20 ղուրուշ է ։ իսկ ամէն մէկ տետրակը զատ զատ առնել ուզողը միայն վճարէ հատին 2 ղուրուշ ։

3. Ստորագրութեան և առաքման տեղին է, Սամաթիա՝ Սուրբ Սահակեան Թանգարանը, և շուկան Ս. Նշանը՝ պարոն Յարութիւն Մարգարեանին գրատունը ։

